

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի և անհմիկ համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

() Խմբագրատանը գրվում են ուղղակի Կոպեկով Պաշտպան Պաշտպան Պաշտպան

ՄՇԱԿ

Խմբագրատանը բայ է տառադարձ 10—2 ժամ (Վարդի կիրակի և անհմիկ օրերից)

Խմբագրատանը ընդունվում է ամեն լեզուով:

Խմբագրատանը ընդունվում է ամեն լեզուով և իրաբանները բառին 2 կոպեկ:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թվին

ՀՐԵՏԵՐԵԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոնների հետևանք օրերից:

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ԱՆՓՆԿՆԵՆ ՀԵՌԵՐԻՆՆԵՐԻ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻՆՆԵՆ ԽՄԻՆԳՐԵՏԵՆ մէջ:

ԱՄԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատուկ: Օտար քաղաքներից պետք է գրվել հետևեալ հասցեով ՊԻՓ-ԼԻՍՆ ԲԵԴԱԿՆԻԱ «ՄՇԱԿ»:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Պրոգրամայի խնդիրը — ներքին տեսակետից: Մեր հասարակական վերաբերման մէջ: Նշանակ խմբագրին: Ներքին լուրերը: «Մշակ» հեռագրերը: Յայտարարութիւնները: — Բանասիրական: Հայոց թատրոն:

ՊՐՈԳՐԱՄԱՍԻ ԽՆԴԻՐ

Վ

Մեր խօսքերը կարդալով անցեալ յօդուածում, գուցէ ընթեր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«ԿՈՅՐ» ԳՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԾՈՎ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԲՈՒՍԵՐԵՆԻՑ

Այդ գրաման առաջին անգամ արվեցաւ Թիֆլիսի հայոց բեմի վրա պ. Ադամանի բեմադրութիւն, զեկտեմբերի 29-ին, 1879 թվին, իսկ երկրորդ անգամ ներկայ թվին յունվարի 21-ին:

Ինչպէս յայտնի է, պ. Ադամանը չորս բերելով մեզ ծառ և Պոլսից, իր նա բերել է, որպէս բաժնիք Թիֆլիսի հայոց կոմիտէի և մշտական խմբի համար մի ամբողջ ընկերութեամբ ֆրանսիական հրահանգած, անմիտ, բոմանտիկական դրոշմի թարգմանված պիեսների... Այդ խմբայն որ նրա բեմադրութիւնը և յայտնի են տալիս, որ ինչպէս ասելու արժանի էր, թարգմանված է ուսուցիչից, — զարմացայ... Եթէ Ադամանը տալիս է այդ պիեսան իր բեմադրութիւն, երևի դա բոմանտիկական դրոշմի chef-d'oeuvre պէտք է լինի, մտածեցի ես:

Եւ անա յունվարի 21-ին շտապեցի ներկայ գտնվել այդ պիեսայի ներկայացմանը:

Նստելով բազմաթիւ մէջ, բայց արի ափիշան որ ինչպէս յայտնի է միշտ ամենալաւ ուղեցոյց է պիեսայի բովանդակութիւնը լաւ ըմբռնելու համար: Բայց ինչ եւ տեսնում, նախ ասված չէ թէ գործողութիւնը որտեղ է կատարվում, երկրորդ բոլոր գործող անձանց միմեանց մէջ յարաբերութիւնները ամենին բացատրված չեն: Ինչ կարելի է հասկանալ այդ տեսակ ափիշայից, որի մէջ միայն սնունդներն են շարված: Արեւոտ — Մօրէլ, Տիբեթից, Գարսի բժիշկ, Բուսո, Արման, Բեմի, Լուիզա, ժընըվիէլ, Սուսաննա և Ժիւլիէտ: Այլ ուս հայրն է, ով ուս աղջիկն է, ով ուս որդին, ով պարան է, ով ծառայ է, ովն յայտնի չէ...

Պիեսայի խաղը սկսվեց ինչպէս որ ափիշայի վրա ոչինչ յայտնված չէր, պիեսայումն էլ յայտնվեցաւ որ իրանք գործող անձինք չը գիտեն որոշ կերպով իրանց մէջ եղած յարաբերութիւնները:

Եւ այդ բոլորը դրա համար որ բոլորը յայտնվի վերջին, հինգերորդ արարուածում...

Տիբեթից հարուստ վաճառական է, Արման ներաւ հարազատ որդին է, բայց հայրը վերջն է իմանում միայն, որ Արման իր որդի չէ, այլ իր կնոջ որդին, որ նրա սիրելիներից է ծնվել: Արեւոտ Տիբեթիցէ անհարազատ որդին է, բայց նա այդ երկար ժամանակ չէ իմանում, Լուիզա Բուսոյի աղջիկն է, բայց այդ մասին հասարակութիւնը չառ ոչ է տեղեկանում, իսկ ուս աղջիկն է ժընըվիէլ, այդ ես այդպէս էլ չիմացայ մինչև վերջը: Բայց ամենազարմանալին այն է որ երկու եղբայրները Արեւոտ և Արման ոչ թէ միայն չեն իմանում որ իրանք եղբայրներն են, բայց միմեանց չեն էլ տեսել երբէք, որովհետեւ երբ Արմանը գործանում է սնուցից 40,000 Ֆրանկ և Արեւոտ նրան գիշերով տեսնում է լուսնակի լուսաւորութեամբ, նա շտապում է տուն և շուտով նկարում է Արմանի դէմքը (Արեւոտ նկարել է) որպէս զի չը մտանայ նրա դէմքը և յետոյ Փօտոգրաֆիա է հանում այդ պատկերից: Երբ Արեւոտ կուրանում է և պատկերում է Լուիզայի նախ, Արմանը սիրահարվում է Լուիզայի վրա, գրում է նրան սիրահարական նամակներ և ուղում է խել Լուիզային իր մարդու եղբայրն է, ոչ էլ Արմանը գիտէ թէ թէ Արմանը իր եղբայրն է, խօսում է նրա հետ, լսում է նրա ձայնը, բայց ոչինչ տեղեկութիւն չի ստանում: Բայց ոչինչ տեղեկութիւն էլ կայանում է այդ ան գիտութեան մէջ: Ժընըվիէլ սիրում է Արեւոտին, բայց Արեւոտ չը գիտէ թէ ժընըվիէլը իրան սիրում է, իսկ ինքն սիրում է Լուիզային, և Լուիզան նրան է սիրում, բայց ժընըվիէլը այնու ամենայնիւ սիրում է Արեւոտին և գոհում է իր սէրը Լուիզայի համար: Արեւոտ, որ շատ օրինաւոր մարդ է, պատահմամբ թուղթ

ցողը զարմանքով հարցնէ, մի՞թէ ուսում աններու իրաւունքից պիտի զրկել Հայ օրիորդներին, երբ ժամանակը այնչափ առաջ է գնացել, որ երօպական լուսաւորութիւնը զուրանների երկրումն է մինչև անգամ թափառում: Այո, հայոց օրիորդներին հարկը անգամ է հարկաւոր երօպական լուսաւորութիւնը, բայց ինչ ուղղութեամբ և ինչ պրօգրամմայով այդ է գլխաւոր հարցը: Մի՞թէ որ և իցէ զերմանական մի գիւղի մէջ գործադրվող պրօգրամման կարելի է գործադրել մի Վարդաշէն, մի Վարաքիսայ գիւղի մէջ: Գերմանական օրիորդները աւելի են զարգացած, նոցա պահանջները և նիւթական գրութիւնը աւելի բարձր են բան թէ մերը, վերջապէս գուցէ երօպացի օրիորդների բնածին յատկութիւնը և դարերով կազմված ու հաստատված ուղղութիւնը ուրիշ բնաւորութիւն և ուրիշ ձև են ստացել բան թէ

հայ աղջկայ ձիրքը և յատկութիւնները: Հայ աղջկը առանց իրկի և ճախարակի, առանց տեխնիկական պարապմունքի նոյնն է, ինչ ձուկը առանց ջրի, հայ աղջկը առանց խոհանոցի նոյնն է ինչ խլրուրը առանց փխրուն հողի: Արեւմն մի՞թէ երօպական պրօգրամման կարելի է բնական համարել և հայ աղջկայ դարերով առաջ եկած անհատական յատկութիւններին: Վերջապէս երօպացի աղջկան շրջապատող պայմանները և ընտանեկան պահանջները միանգամայն այլ են բան թէ մերը: Երօպայի մէջ իւրաքանչիւր քայլափոխում տարածված են և զարգացած են ամեն տեսակ գործարարներ, արհեստանոցներ, որտեղ մարդկերանց ձեռքերը փոխարինվում են մեքենայի ոյժերով, մինչդեռ հայոց կեանքի մէջ ոչ գործարարներ կան, ոչ քիմիական լաբորատորիաներ և ոչ արհեստանոցներ երօպական

է խաղացել և պատահմամբ տանուլ է տուել 30,000 Ֆրանկ, որ չէ կարող վճարել իր պարտատիրոջ, որովհետեւ փող չունի, բայց ժընըվիէլը վճարում է իր բաժնիքից Արեւոտի պարտքը և Արեւոտը այդ չէ իմանում մինչև հինգերորդ գործողութիւնը և ժընըվիէլը էլ, որ կուսանոց է մտնում, նոյնպէս չէ յայտնում մինչև վերջին գործողութիւնը թէ ինքն է վճարել այդ պարտքը և համարում է որ Արեւոտ տանջվի, իր հօր տանից աջօրով, մեղադրված լինելով իր թէ գողացել է 40,000 Ֆրանկ, և իր թէ այդ գումարից է վճարել իր թղթախաղի պարտքը, այն ինչ Արմանն է գողացել այդ փողերը, որին Արեւոտ մի անգամ տեսել է լուսնի շողքերից լուսաւորված, ունի նրա պատկերը, կարծեմ ութ տարի շարունակ պահում է նրա պատկերը իր ծոցում և յայտնում է այդ մասին նոյնպէս հինգերորդ գործողութեան մէջ...

Ինչպէս որ հասկացաք մի բան այդ պիեսայից, — ես ոչինչ...

Գրամայի հինգ գործողութիւնը լսելուց յետոյ, ես համոզվեցայ որ եթէ այդ պիեսան վեցերորդ գործողութիւն ունենար, կը յայտնվէր, որ Արեւոտի մայրը, Տիբեթիցի սիրուհին, բոլորովին մոռած չէ, այլ կինդանի է և ապրում է Լուիզայի մօտ, աղախնու կերպարանքով և Սուսանայի ախտով, իսկ բժիշկ Գարսի, որ բժշկել է Արեւոտին և մեռածարտութեան է հրաւիրել Արմանին, պաշտպանելով կոյր Արեւոտին, որ ինքն մեռածարտել է կարող, բժիշկ Գարսի, ասում եմ, կը յայտնվէր Տիբեթիցի հանգուցեալ կնոջ սիրելիանը և այդպիսով կը յայտնվէր որ նա մեռածարտութեան էր հրաւիրել իր որդուն: Վերջապէս, եթէ եօթերորդ գործողութիւն լինէր, — կը յայտնվէր որ թէ մի ծառան Բուսոյի անհարազատ որդին է, ուրեմն Լուիզայի եղբայրն է:

Եւ այդպէս անվերջանալի կերպով...

Իսկ ամբողջ պիեսայի միտքը այն է, որ արդարութիւնը և անմեղութիւնը հինգ գործողութիւնից և անասելի տանջանքներից յետոյ յայտնող է հանդիսանում, իսկ շարութիւնը պատժվում է...

Արեւմն պիեսայի այդ խառն և խճճված ինտրիգան միայն դրա համար էր, որ յայտնվի այդ հասարակ և հնացած, բայց իրականութեան մէջ գրեթէ երբէք չիրագործվող միտքը:

Յայտնի է որ թատրոնը պէտք է կրթողական ազդեցութիւն ունենայ ժողովրդի վրա:

Այդ ազդեցութիւնը կարելի է տեսնալ երկու միջոցներով կամ իրէջալական գաղափարներ ներհնելով ժողովրդի մէջ և կամ ժողովրդին իրական կեանքից պատկերներ ներկայացնելով, այսինքն յարուցանելով ժամանակակից, օրական խնդիրներ:

Եթէ դուք կամենում էք սկսել ժողովրդի վրա ազդել իրէջալական դրոշմի միջոցով, ծանօթացնել նրան յաւիտեական, ընդհանուր մարդկային, անմահ գաղափարների և տրիպերի նետ, — ներկայացրէք երեկոյի գործերի կատակային, մշակված, ձեռք և մտքի կողմից կատարեալ գրուածները: Կամենում էք ցոյց տալ անասման սէր և խանդաւորութիւն, — տուցէք Շէկսպիրի «Օտէլլո», կամենում էք համոզել հասարակութեանը որ չարութիւնը վերջը միշտ պատժվում է, — ներկայացրէք Շիլլերի «Աւագակներ», դիտաւորութիւն ունէք ընդհանուր մարդկային պակասութիւնների, մարդկային ընդհանուր կրքերի նետ ծանօթացնել հասարակութիւնը, — ներկայացրէք Մօլլերի «Ելլապա» կամ «Տարափոքը» և այլն:

Շիլլերի, Գեթթեի, Շէկսպիրի, Մօլլերի և սրանց նման գործերի պիեսաները տեսնելով, հասարակութիւնը ճշմարիտ է նոր, ժամանակակից, օրական խնդիրների նետ չի ծանօթանայ, բայց կրթվելով ընդհանուր մարդկային գաղափարների մէջ, կընդունի այդ գաղափարները գեղեցիկ և կատարեալ ձևերի միջոցով և ոչ թէ մի պիեսայի միջոցով, որի ձևն էլ անճոռնի է, ինչպէս «Ելլոյ», կամ սրա նման պիեսաները:

Բայց ի հարկէ դրա համար հարկաւոր են լաւ դերասաններ...

Եթէ ոչ, ինչ օգուտ կայ «Ելլոյի» պէս գրուածների ներկայացնելուց, որտեղ միտքը ամենահասարակ և հնացած է, իսկ ձևը, որի մէջ գրուածքը ամփոփված է, խառնաչփոթ, խճճված և անճոռնի է և պիեսայի դիրքերը, ամբողջ նրա ընթացքը ամենամեծ անյարմարութիւններով լի է... Ինձ կասեն, «դուք խօսում էք ամբողջ ժամանակ նոյն իսկ պիեսայի վրա, բայց ոչինչ չէք ասում դերասանների խաղի վրա»: Գործան և կը պատասխանեմ որ ինչքան էլ երեկոյի լինէին դերասանները, այդ տեսակ անճոռնի պիեսայում

մտրով: Հայի արհեստանոցը նորա տունն է, ուր դարերով մտել է արդիւնաբերական ոգին և արհեստը և հասել բաւական մեծ տեխնիկական զարգացման: Ինչպէս ապացոյց կարելի է ցոյց տալ տաճկաց Հայաստանը, ուր շրջում են եւրոպական բոլոր գործուածներ, միայն դուրս եկած ո՛չ գործարաններից, այլ հայուհու ձեռքից. հայուհին եւրոպական մի նշմար գտնելով իսկոյն յարմարեցրել է և արդիւնահասնել նոյնանմանը իր տնական առ ձեռն մեքենաների վրա և այդպիսով մեծ կոնկուրէնցիա դրել Եւրոպայից եկող ապրանքի դէմ: Երբ այդպիսի մի ձիրք մտել է և վարդացել հայուհու մէջ դարերի ջանքով, ուրեմն ինչո՞ւ չը պահպանել և չը խրախուսել այդ ընդունակութիւնը, որը բուցէ չունեն ուրիշ ազգերը, թէկուզ հայերից էլ շատ զարգացած....

Մինչդեռ այժմեան պրոգրամման, որ ունեն մեր օրիորդական ուսումնարանները խրախուսում են արդեօք այդ ուղղութեանը, մի՞թէ այն աննշան ասեղնագործութիւնը որը ֆորմի համար մոցրած են մեր օրիորդաց մէջ փոխարինում են այդ խրախուսանքը. մի՞թէ Լգուլիսի, Վարաբաղի, Գանձակի, Նուխու, Օջնագուրի, Ե-

ւնհատական պաշարը: Մինչդեռ հայ աղջկայ օժիտը այժմ պիտի փոխարինէ նորա հօր վերջի կօպէկը և իր սեփական ունեցածը և այդ ունեցածը կայանում է տասնորդական կոտորակների, ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան բեկորների վրա....

Ե՛հա այս է պատճառը որ մենք յարուցանում ենք այն հարցը որ յարուցվեց արդէն մի քանի ամիս առաջ «Մշակի» մէջ բայց մնաց առանց հետեանքի: Մենք կարծում ենք որ այսպիսի մի կարևոր հարց, ինչպէս մեր օրիորդական ուսումնարանների դրութիւնն է, չէ կարող առանց հետեանքի մնալ, որովհետեւ այդպիսի անուշագործութեան հետեանքները քիչ ժամանակից յետ սպառնալի կարող են լինել....

Վասն որոյ առաջարկում ենք բոլոր սրտին մօտիկ աւնդներին, օրիորդական ուսումնարանների պրոգրամմայի խնդիրը շինել օրվայ հարց և ընդհանուր ջանքով վրձուել այդ խնդիրը հայոց պահանջներին, հայոց ուղղութեան, հայոց յատկութիւններին համեմատ, այլ ոչ թէ կուրօրէն Եւրոպայից առնելով: Երբ ժամանակ միայն մեր նորամուտիւնը կունենայ խելացի և զիտակցական բնաւորութիւն. այդ ժամանակ միայն

անկարելի է դատել դերասանի խաղալու շնորհի վրա: Բայց ուրիշ կողմից եւ հաւատացած եմ որ ոչ մի օրինաւոր դերասան երբէք չի համաձայնի խաղալ զկոյրիս պէս մի արուեստական գրուածքի մէջ: Թող պ. Արամեանը փորձի մի անգամ խաղալ ոչ թէ միայն մի այնպիսի հանրածանօթ պիեսայի մէջ, որի տիպիքը անմահ են և որի ձևը անյանդմանելի է, բայց մինչև անգամ փորձի մեր տեղական գրողի, Սուրբուկեանցի Վելլի մէջ զո՞չ գրուածքի թէև թոյլ, բայց իրական և կենդանի Միլթոնի զերը ներկայացնել. — և այն ժամանակ եւ կասեմ նա լաւ դերասան է, թէ ոչ: Բայց քանի որ նա կը խաղայ արուեստական, օղալին, անբնական, իրականութենից դուրս, անյարմարութիւններով լի պիեսներում, ինձ անհարկն կը լինի գնահատել, կամ քննադատել նրա և մեր մշտական խմբի բոլոր դերասանների խաղը:

Եւ վերս վերջի արդէն պիեսայի բոլոր անյարմարութիւնները, անկապ ընթացքը, անբնական դիրքերը, ինձ մնում է միայն աւելացնել և հետեւեալը: Արեւմտը կուրանում է յայտնի չէ թէ ինչպէս և ինչ պատճառով: Եթէ նա կատարակտ ասված կուրութեան ցաւով է կուրացել, այսինքն եթէ նրա աչքերը ծածկվել են բարակ սպիտակ փառով, — այն ժամանակ այդ ցաւը յանկարծակի չէ յայտնվում: Եթէ յանկարծակի է կուրացել, — այդ ոչ մի բժշկական օպերացիայով բժշկել չէ կարելի: Իսկ Արեւմտը ութ տարի կուր լինելուց յետոյ, բժշկվում է Գարսի բժշկի ձեռքով մի րօպէում և դուրս է վազում միս սննեակից զեռ երեսուրեք վիշն, աղաղակելով ընտանուում եմ... Կարծես թէ այդ տեսակ ծանր ցաւի բժշկելը նոյն է ինչ որ մի մարդու միտքը ածիլելը... Կատարակտի աջող օպերացիայից յետոյ հիւանդը, ինչպէս յայտնի է, ամբողջով պէտք է նստի մութ սենեակում, մինչև որ կատարակտայ առողջանայ... Եւ անա այդ տեսակ անբնականութիւններով լի է պիեսան... Հասարակութիւնը կատարել կերպով ծախսարում է, որովհետեւ է քէ է կտնէր շատ կան, թէ՛ պիեսայի ամբողջ ընթացքը վերին աստիճանի անմիտ է: Հասարակութիւնը ծախսարում է, երբ ամբողջ, սեղանը և նրա վրա դրած շամազանը ընկնում են, երբ կուզ ունեցող բժիշկ

Գարսին իր կուզի վրա հանաքներ է անում, երբ կուրը առողջանում է, երբ Լուկա և Սուսաննա սպառնալիքներով ճանապարհ են գցում Արմանին և այլն... Եթէ կտ, միշտ էթէ կտ, առանց բովանդակութեան....

Այդ տեսակ պիեսայից ինչ է դուրս բերում հասարակութիւնը... Միայն այսքան. «Ինչ լաւ էր այն կուզիանը, կամ ինչ լաւ էր ներկայացնում Արամեանը կուրին. զարմանալի է ինչպէս նա երկու գործողութիւն շարունակ իր աչքերը շուռ էր տալիս, այնպէս որ միայն սպիտակն էր երեւում աչքերի մէջ...» և այլն:

Բայց մի իրական օգուտ, մի օրական խնդրի յարուցանելը, — դա մեր կոմիտէի կարծեքով բեմի գործը չէ:

Այն ինչ թատրօնը միայն այն ժամանակ կարող է կրթողական ներգործութիւն ունենալ ժողովրդի վրա, երբ նա ձեռք ձեռքի տուած՝ ընթանում է դպրոցի, լրագրութեան, հասարակական կարծիքի հետ միասին, երբ նա յարուցանում է օրական խնդիրներ, մղում է, զրգում է հասարակութիւնը զէպի առաջադիմութիւն, զարթոնելով նրա մէջ իր հասարակական երեւոյթների ինքնաքննութիւնը:

Թատրօնը նոյնը պէտք է անի, ինչ որ անում է ամենօրեայ լրագրի առաջնորդող յոդուածը. նա պէտք է զարթոնել օրվայ հարցեր: Նոյնը անում է նոր մտքեր, կամ մտրակում է մնասակար երեւոյթները: Վերջինը Տուրգենիեվին, երբ որ Ռուսաստանում յարուցվեցաւ ճորտերի ազատութեան խնդիրը, Տուրգենիեվի գրեց «ЗАПИСКИ ОХОТНИКА» երբ որ յայտնվեցան Ռուսաստանում նոր ձևի, մարդիկ, այսինքն խօսքի բայց ոչ թէ գործի մարդիկ, ռուս երեւելի հեղինակը ստեղծեց իր «РУДИН» սովալը, երբ Նի՛նիլիստների տիպեր յայտնվեցան ռուս հասարակութեան մէջ, Տուրգենիեվի գրեց «ОТЦЫ И ДЕТЯ» բովանդ, որի մէջ մտրակեց այդ տեսակ երիտասարդութիւնը: Բազարովի տիպը ներկայացնելով, վերջապէս Եւզեյեվի պէս ժողովրդական անաջող և թիրուս պրօպագանդիստների Ռուսաստանում շատանալուն պէս, Տուրգենիեվի գրեց «НОВЬ» բովանդ, որի մէջ Նեմոլովի տիպի մէջ մտրակեց այդ ուղղութեան մարդիկներին:

անհատական պաշարը: Մինչդեռ հայ աղջկայ օժիտը այժմ պիտի փոխարինէ նորա հօր վերջի կօպէկը և իր սեփական ունեցածը և այդ ունեցածը կայանում է տասնորդական կոտորակների, ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան բեկորների վրա....

Ե՛հա այս է պատճառը որ մենք յարուցանում ենք այն հարցը որ յարուցվեց արդէն մի քանի ամիս առաջ «Մշակի» մէջ բայց մնաց առանց հետեանքի: Մենք կարծում ենք որ այսպիսի մի կարևոր հարց, ինչպէս մեր օրիորդական ուսումնարանների դրութիւնն է, չէ կարող առանց հետեանքի մնալ, որովհետեւ այդպիսի անուշագործութեան հետեանքները քիչ ժամանակից յետ սպառնալի կարող են լինել....

Վասն որոյ առաջարկում ենք բոլոր սրտին մօտիկ աւնդներին, օրիորդական ուսումնարանների պրոգրամմայի խնդիրը շինել օրվայ հարց և ընդհանուր ջանքով վրձուել այդ խնդիրը հայոց պահանջներին, հայոց ուղղութեան, հայոց յատկութիւններին համեմատ, այլ ոչ թէ կուրօրէն Եւրոպայից առնելով: Երբ ժամանակ միայն մեր նորամուտիւնը կունենայ խելացի և զիտակցական բնաւորութիւն. այդ ժամանակ միայն

Նոյնը անում է և թատրօնը: Երբ ճորտերի ազատութիւնից յետոյ հաստատվեցան նոր յարաբերութիւններ ազատված ճորտերի և նրանց կալուածատէրերի մէջ, Պոտեխին գրեց «ОТРЕЗАННЫЙ ЛАМОТЬ» պիեսան, երբ լրագրութեան և հասարակական կարծիքի մէջ յարուցվեցաւ հրէաների հարցը, այդ հարցի մասին շարունակվում էր պօլէմիկը, և օրէնսդրութեան մէջ պատրաստվում էին հրէաներին միւս քաղաքացիների հետ քիչ թէ շատ հաւասարեցնող նոր օրէնքներ, — Վիպլէնկօ ռուս թատերագրողը գրեց «Современная барышня» պիեսան, որի մէջ օրիորդը սիրում է հրէայ ռուսնուղին, առանց իմանալու թէ նա հրէայ է, բայց երբ իմանում է, դարերով արմատացած նախապաշարմունքը րօպէական կերպով յաղթում է սիրոյ զգացմունքը....

Ան ինչ է նշանակում օրական հարցեր յարուցանել բեմի վրա: Երեւակայեցե՛ք ձեզ որ օրէնսդրութիւնը պատրաստում է մի նոր օրէնք անհարազատ երեխաների վերաբերութեամբ, կամ ապահարզանի մասին մի նոր օրէնք, կամ դաւանութիւնների ազատութեան օրէնքը, — և անա բեմը ներկայացնում է նոյն խնդիրների քննութիւնը զիտարուեստական ձևի մէջ և այդպիսով պատրաստվում է հասարակական կարծիքը նոր օրէնքների իրագործելուն և հասարակութեան մէջ զբնական տարրանալուն....

Եւ դուք կարծում էք որ նոյն տեսակ օրական խնդիրներ չը կան և մեր հասարակութեան մէջ.... Ընտանիքի բուժաւորութիւնը, մեր օրիորդներից ստացած դարգակ ռուսումը, որով նրանք չեն կարող իրանց համար մի կտոր հաց ձարել, մեր անհարազատ երեխաների անօգնական դրութիւնը, մեր ամուսնական շահասէր յարաբերութիւնները, սեփական աշխատանքով ապրելու խնդիրները, մեր բարձր ուսում ստացածների հասարակական մակերեսային տակ ընկնելը և նրանց անտարբերութիւնը զէպի ամեն առաջադիմութիւն.... և այլն, ինչքան ուզում էք....

Սուրբուկեանց սկսել էր այդ ուղղութեամբ գրել, բայց դժբաղդարար կէս ճանապարհի վրա կանգնեց և չը շարունակեց: Բայց կթէ մենք ինքնիրա չենք կարող հեղինակել և պէտք է բաւականանանք միմիայն թարգ-

աշխատանքի բաժանութիւնը, ըստանալով կանոնաւոր ձև, կարող է խոստանալ մեզ հաստատ ապագայ....

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՎԵՐՔԵՐԻՑ ՄԵԿԸ

Մի ժողովրդի, մի հասարակութեան գարգացումը այն ժամանակ է կանոնաւոր և հաստատ, երբ նրա բոլոր ուժերը զուգընթաց զարգանում են միասնակ ձգտումների և զազախարների զրօշակի տակ, իսկ երբ նրա ուժերը գտնվում են անհաստատակցութեան խափան մէջ, այն ժամանակ այս հասարակութեան մէջ անպակաս են գտնուան անբնական քայքայող երեւոյթներ: Հայ հասարակութիւնը համարեա մօտ է այսպիսի դրութեան իր արական և իզական սեռերի անհաստատ կրթութեամբ, թէպէտ և բոլոր աղբերի մէջ սիրում է այս անհաստատութիւնը, բայց նա այնքան զգալի և մեծ չէ, ինչքան մեզանում: — Աւանան ծարաւ ունելով հայ երիտասարդութիւնը թողնում է և հայրենիքից հեռանում է դէպի գիտնական կենտրոնները, որտեղ նա ձաշակում է գիտութեան պտուղները, որտեղ նա ծանօթանում է աւելի բարձր պրոֆիցիպիների հետ, նրա զգայուն սիրտը յափշտակվում է վեմ զազախարներով, նրա մէջ զարթնում են աւելի աղին զգացմունքներ, քան այն, որով շաղաղված է նրան ստեղծող հասարակութիւնը. երիտասարդութեան աւելի տկար, աւելի փոքրզի անբանները զարհուրելով ազագայում նրանց սպասող կենքի պատկերով, և կուրացած անձնական բարօրութեան զգացմունքով, ընկնում են օտար հասարակութեան

մանական թատրօնական պիեսներով, գոնէ թարգմանեք օտար գրականութիւններից այնպիսի պիեսներ, որոնց առաջնորդող զազախարը յարմար է գալիս մեր կենսական օրական խնդիրներին, բայց ոչ թէ «Ելոյր», «Նիկարչի դուստր», «Սէր առանց համարման» և ուրիշ նրանց նման անմիտ պիեսներ....

Վերջը մի քանի խօսք ուղղում եմ զէպի կոմիտէին և նրա բէթիտօրը: Կերասանները երբէք օրինաւոր կերպով իրանց դերերը չը գիտեն: Տիւրքիէ, երբ մուսացել է ինչ պէտք է ասի, կրկնում է անտեղի կերպով արդէն ասված ֆրազան, ժընըվիէվը (կոյրը) ամենաողբերգական րօպէում (հինգերորդ գործողութեան մէջ) դուրս է գալիս մի հինգ րօպէով սննեակից, յայտնի չէ թէ ինչ հարկաւորութեան համար և յետոյ նորից մտնում է բեմը: Ի՛նչ մի ծառան միշտ մտնում է երբ որ նրան չեն կանչում և երբ որ արդէն կանչանած է դրան մօտ, այն ժամանակ պարոնը զանգակ է տալիս: Երբ Արեւմտը Ի՛նչ մի ուղարկում է մէկին նամակ տանելու, ծառան ասում է «Իսկոյն գնում եմ, բայց դարձեալ մնում է և Արեւմտը չէ ասում նրան «Ինչի չես գնում...» Այդ այն պատճառով է, որ Ի՛նչ մի գիտէ թէ Արեւմտը մի մօնօրօգ պէտք է ասի և այդ մօնօրօգից յետոյ ինքն էլ մի մօնօրօգ ունի ասելու....

Վերջապէս հինգերորդ գործողութեան մէջ Արեւմտը ոչ թէ միայն կոյր է, բայց և խուլ է, որովհետեւ երբ նա խօսում է ժընըվիէվի հետ, առանց իմանալու թէ Տիւրքիէ ներկայ է, այդ վերջինը այնքան բարձր է բղաւում, որ Արեւմտը անպատճառ խուլ պէտք է լինի նրա ձայնը չը լսուի: Բայց նա լսում է իր հօր ձայնը միայն այն ժամանակ երբ պիեսայի մտքով հարկաւոր է որ լսի....

Վերջացնում եմ խօսքս կրկին զիմելով կոմիտէին և ասելով, ցաւալի է երբ մտաւորապէս անպատրաստ մարդիկ յանձն են առնում ժողովուրդը առաջնորդելու: